



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 76580 գործարքներ, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 14.7%-ով:

2008թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 27007 օտարման գործարքների 83.3% կազմել են առուվաճառքները, 15.4%` նվիրատվությունները և 1.3%` փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 32.0% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.5% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2008թ. առաջին կիսամյակում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.7%-ով: 2008թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 6615 առուվաճառքի գործարքների 59.6% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.0%-ով:

2008թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2007թ.
Կենտրոն	433600	475500	463000
Արաբկիր	343400	401200	377300
Քանաքեռ-Զեյթուն	247200	303000	286100
Նոր-Նորք	215700	267500	242900
Ավան	200900	264800	240200
Էրեբունի	211400	266800	243100
Շենգավիթ	226500	274400	256900
Դավթաշեն	233100	283200	267200
Աջափնյակ	217500	272500	251800
Մալաթիա-Սեբաստիա	205400	260400	241300
Նուբարաշեն	120200	149100	131600
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	241300	292600	272900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. առաջին կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 7.2%, իսկ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 21.3%:

2008թ. առաջին կիսամյակում Երևանում քաղաքում իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2008թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2594 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 10.4%-ով:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	96500	121200	110800
	Ապարան	28500	32300	29700
	Թային	34200	41800	39200
Արարատ	Արտաշատ	76600	93700	89000
	Մասիս	84700	124300	106200
	Վեդի	55600	77700	67000
	Արարատ	54000	59200	57800
Արմավիր	Վաղարշապատ	118000	159700	137300
	Արմավիր	83100	115100	102400
	Մեծամոր	54000	75400	64700
Գեղարքունիք	Սևան	55500	84600	69500
	Գավառ	32900	44200	37800
	Սարտունի	48000	66200	56300
	Վարդենիս	25700	30400	27300
	Ճամբարակ	14300	15900	15300
Լոռի	Վանաձոր	66600	86400	77100
	Ստեփանավան	32700	45100	40700
	Սպիտակ	43400	60400	50800
	Ալավերդի	24050	29100	27000
	Տաշիր	23200	30100	27400
	Թումանյան	5400	5600	5500
	Շամլուղ	3000	3200	3100
	Ախթալա	11400	12800	12100
Կոտայք	Աբովյան	134400	166000	151500
	Նոր Հաճն	92600	119100	109200
	Բյուրեղավան	66200	94300	79400
	Եղվարդ	83100	111800	99500
	Հրազդան	46600	64100	55800
	Ծաղկաձոր	86050	140600	105400
	Չարենցավան	55800	85000	68400
Շիրակ	Գյումրի	63700	92100	77900
	Արթիկ	41900	53300	47900
	Մարալիկ	24400	26400	25800
Սյունիք	Գորիս	66400	98800	78700
	Կապան	60300	84200	71500
	Սիսիան	49700	67800	56500
	Մեղրի	36000	45200	41100
	Ագարակ	23400	28700	26300
	Քաջարան	30350	45200	36900
	Դաստակերտ	6800	7000	6900
Վայոց Ձոր	Վայք	55200	72300	65600
	Եղեգնաձոր	66900	92900	82900
	Զերմուկ	98700	122700	113300
Տավուշ	Դիլիջան	61500	85900	73900
	Իջևան	81800	115100	97800
	Բերդ	33000	38000	35200
	Նոյեմբերյան	27100	29800	28700
	Այրում	18000	21100	20900

2008թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 14.1%, իսկ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 33.9%:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսական փոփոխման շարժերն ունեն աճի միտում:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3031 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 677, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2354: 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 2.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 20.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 2.1%-ով:

2008թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	առաջին կիսամյակ 2007թ	առաջին կիսամյակ 2008թ	երկրորդ կիսամյակ 2007թ
Կենտրոն	441600	488800	474000
Արաբկիր	351000	408600	389300
Քանաքեռ-Զեյթուն	251100	311100	290200
Նորք-Մարաշ	219200	274700	243700
Ավան	204100	270800	244600
Էրեբունի	216400	270700	246800
Շենգավիթ	229100	277700	260500
Դավթաշեն	238500	292000	271500
Աջափնյակ	221300	278300	256200
Մալաթիա-Սեբաստիա	208300	269900	245200
Նուբարաշեն	123100	154500	134000
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	245800	299700	277800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 7.9%, իսկ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 21.9%:

2008թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն, համապատասխանաբար, աճի և կայունացման միտում:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		առաջին կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	99300	124400	114900
	Ապարան	31900	35300	33500
	Թալին	36900	44900	42100
Արարատ	Արտաշատ	79100	99100	93600
	Մասիս	88200	127500	108900
	Վեդի	58800	84000	69100
	Արարատ	57300	64600	62600
Արմավիր	Վաղարշապատ	120700	163000	140200
	Արմավիր	86100	119400	104400
Գեղարքունիք	Սևան	58000	86900	71300
	Գավառ	35900	46300	40500
	Սարտունի	51000	69400	58300
	Վարդենիս	29300	32500	30700
	Ճամբարակ	16800	19700	18600
Լոռի	Վանաձոր	70600	91100	82100
	Ստեփանավան	36500	50200	43800
	Սպիտակ	47200	64500	53400
	Ալավերդի	27400	31500	30000
	Տաշիր	25900	33500	29400
	Թումանյան	7800	9500	8700
	Շամլուղ	5100	6300	5800
	Ախթալա	13600	15700	15000
Կոտայք	Աբովյան	138700	171400	157000
	Նոր Հաճն	97400	124000	113600
	Բյուրեղավան	68800	97000	81500
	Եղվարդ	87200	115600	102600
	Հրազդան	50000	67100	59100
	Ծաղկաձոր	105800	213900	158300
	Չարենցավան	58100	87000	70700
Շիրակ	Գյումրի	67500	96200	82900
	Արթիկ	44300	56100	50200
	Մարալիկ	26900	30400	28900
Սյունիք	Գորիս	69000	101100	81800
	Կապան	63200	87900	74800
	Միսիան	53200	70200	59100
	Մեղրի	38900	48600	43500
	Ագարակ	26100	31400	28000
	Դաստակերտ	9400	10200	9800
Վայոց Ձոր	Վայք	58300	76700	67400
	Եղեգնաձոր	69500	98200	85700
	Ջերմուկ	47600	74600	61200
Տավուշ	Դիլիջան	64700	90700	77600
	Իջևան	84100	119700	100300
	Բերդ	35800	40200	38100
	Նոյեմբերյան	29500	35200	33300
	Այրում	19200	22800	22400

2008թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին

գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 15.0%, իսկ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 35.6%:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարվել են 11045 միավոր /8033.87 հա/ հողեր, որից Երևանում՝ 756 միավոր /95.46 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 333 միավոր /97.60 հա/ հողեր, որից Երևանում՝ 183 միավոր /25.75 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4681 միավոր /7294.67 հա/, որից Երևանում՝ 30 միավոր /4.03 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 4007 միավոր /364.23 հա/, որից Երևանում՝ 468 միավոր /37.86 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 2096 միավոր /167.94 հա/, որից Երևանում՝ 242 միավոր /43.80 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 156 միավոր /111.44 հա/, որից Երևանում՝ 16 միավոր /9.76 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 85 միավոր /90.78 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 17 միավոր /4.70 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 3 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.10 հա/:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 10290 միավորի /7586.41 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 696 միավոր /89.36 հա/, նվիրատվության գործարքներ՝ 680 միավոր /435.12 հա/, որից Երևանում՝ 43 միավոր /4.45 հա/ և փոխանակության գործարքներ՝ 75 միավոր /12.34 հա/, որից Երևանում՝ 17 միավոր /1.65 հա/:

Հանրապետությունում 2008թ. առաջին կիսամյակում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.1%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 4.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 31.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 2846.12 հա, որից 2782.49 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 40.5%-ը կամ 4170 գործարքներ /3068.71 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 240 միավոր /40.41 հա/, իսկ 59.2%-ը կամ 6093 միավորը /4492.68 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 453 միավոր /48.39 հա/: 2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 27 գործարք /25.02 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ

ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	15	9.67	86	9.82	139	20.91	29	3.96	1	0.09	337	24.03	86	20.32
Արագածոտն	271	763.32	3	0.11	25	2.92	108	7.56	379	445.52	1	0.13	316	28.63	11	0.26
Արարատ	205	381.53	26	39.15	226	25.16	238	31.14	515	209.77	4	4.07	396	35.60	37	3.47
Արմավիր	120	418.02	17	6.68	28	2.47	163	3.17	608	2364.47	1	0.10	462	40.42	45	10.79
Գեղարքունիք	36	132.38	3	1.06	183	20.45	110	8.66	205	110.23	0	0.00	99	13.36	11	1.33
Լոռի	15	14.53	10	5.90	55	4.30	199	8.70	314	251.71	2	0.45	62	7.67	27	1.24
Կոտայք	338	731.30	20	7.33	199	15.94	289	14.31	728	416.18	3	0.32	720	66.16	47	10.97
Շիրակ	11	8.57	11	7.50	163	8.70	120	4.71	104	186.20	1	0.04	58	5.40	15	0.31
Սյունիք	13	47.50	7	10.07	24	2.01	125	3.36	87	85.12	2	2.93	30	2.41	18	0.54
Վայոց Ձոր	79	141.64	5	0.53	43	3.84	146	2.72	44	42.66	1	0.05	27	3.10	11	2.26
Տավուշ	45	54.14	18	13.40	90	6.03	99	5.79	124	57.84	1	0.06	70	6.30	6	1.32
Ընդամենը	1133	2692.93	135	101.40	1122	101.64	1736	111.03	3137	4173.66	17	8.24	2577	233.08	314	52.81

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	162	24.65	15	9.67	45	2.64	102	12.34	78	15.75	0	0.00	0	0.00	41	7.18	37	8.57
Արագածոտն	14	0.30	0	0.00	0	0.00	14	0.30	391	773.16	269	762.87	3	0.11	25	2.92	94	7.26
Արարատ	52	18.28	7	3.28	5	0.17	40	14.83	642	455.71	204	378.53	19	35.88	221	24.99	198	16.31
Արմավիր	51	0.40	4	0.06	1	0.002	46	0.34	268	427.17	111	415.25	13	6.62	27	2.47	117	2.83
Գեղարքունիք	35	4.36	1	0.36	12	1.95	22	2.05	296	150.19	35	124.38	2	0.70	171	18.50	88	6.61
Լոռի	17	1.21	2	1.01	0	0.00	15	0.20	262	32.22	15	14.53	8	4.89	55	4.30	184	8.50
Կոտայք	63	3.52	6	1.35	15	0.46	42	1.71	773	762.84	328	728.77	14	5.99	184	15.48	247	12.60
Շիրակ	47	1.47	2	0.06	23	0.65	22	0.76	258	28.02	11	8.57	9	7.44	140	8.05	98	3.96
Սյունիք	8	6.36	1	6.05	1	0.02	6	0.29	161	56.59	13	47.50	6	4.02	23	2.00	119	3.07
Վայոց Ձոր	10	0.65	3	0.46	0	0.00	7	0.19	263	148.08	79	141.64	2	0.07	43	3.84	139	2.53
Տավուշ	31	5.67	2	4.89	18	0.62	11	0.16	219	73.61	43	54.06	16	8.51	72	5.41	88	5.63
Ընդամենը	490	66.87	43	27.19	120	6.51	327	33.17	3611	2923.34	1108	2676.10	92	74.23	1002	95.14	1409	77.87

Հանրապետությունում 2008թ. առաջին կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 25 գործարքներ /16.83 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. առաջին կիսամյակում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 6.1%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 12.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել է 6.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 26.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 10.0%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 5.4%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 53.3%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. առաջին կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	239	688.65	33.9	5500.0	194.3	271	298.52	362.2	12000.0	3159.4
Ապարան	2	0.86	42.5	3573.3	1807.9	23	28.00	86.5	2727.3	412.0
Թային	28	73.36	34.4	625.6	125.0	57	78.40	90.6	5494.5	441.0
Ծաղկահովիտ						21	21.59	77.0	1000.0	188.3
Արարատի մարզ										
Արտաշատ	58	87.31	32.4	2332.3	893.3	240	73.88	335.1	10833.3	1666.7
Մասիս	53	79.96	27.2	2310.0	569.4	100	47.47	181.1	11904.8	2099.4
Վեդի	93	211.26	24.7	9364.6	614.9	172	87.15	203.8	10795.1	1462.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	25	85.32	31.4	3181.8	453.7	215	154.90	294.3	9090.0	1063.9
Բաղրամյան	47	220.41	33.8	802.5	69.2	93	1965.18	90.6	2561.1	633.1
Վաղարշապատ	39	109.53	30.0	3610.0	988.8	272	228.75	443.7	11764.7	1882.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						96	33.30	190.2	1875.0	405.3
Ճամբարակ	18	14.51	99.3	3475.7	883.5	66	28.54	45.3	953.3	169.1
Մարտունի	1	0.10	1126.0	1126.0	1126.0	14	4.56	45.3	2850.0	492.3
Սևան	4	9.84	218.3	1221.0	641.9	1	1.00	45.3	2134.8	209.2
Վարդենիս	12	99.93	66.0	2541.0	677.7	28	42.83	27.2	2575.1	279.5
Լոռու մարզ										
Ալավերդի	6	9.35	130.7	1155.0	433.3	139	68.73	163.0	6424.2	1142.6
Գուգարք	4	1.09	93.4	700.0	245.2	19	8.37	226.4	6065.9	975.6
Սպիտակ	5	4.09	229.0	271.9	248.2	7	1.75	226.4	5555.5	541.1
Մտեփանավան						49	40.46	90.6	2257.5	397.9
Տաշիր						100	132.41	45.3	1384.4	217.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	172	411.03	35.3	2418.6	346.2	312	161.20	271.7	11942.7	3851.6

Եղվարդ	121	282.85	34.8	2950.8	338.8	325	169.91	172.1	11971.8	2702.2
Հրազդան	35	34.89	46.0	8060.8	574.7	82	69.88	113.2	10256.4	1083.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.00	294.8	294.8	294.8	55	46.98	249.0	1693.1	475.5
Ամասիա	1	4.48	223.2	223.2	223.2	6	89.21	36.2	261.0	120.0
Անի						35	37.18	108.7	546.9	268.1
Աշոցք	1	1.00	304.0	304.0	304.0	2	5.00	45.3	215.8	118.8
Արթիկ	8	2.09	105.0	691.1	298.3	5	2.01	63.4	1428.6	184.0
Սյունիքի մարզ										
Գորիս						36	42.75	90.6	1023.2	370.4
Կապան	9	44.10	180.0	1135.8	575.4	12	15.11	54.3	841.6	242.5
Մեղրի	1	0.51	138.6	138.6	138.6	17	2.95	181.1	3000.0	535.0
Միսիան	3	2.89	451.5	1008.7	789.1	21	24.30	45.3	1977.4	260.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	50	40.95	33.3	1966.5	329.1	14	20.94	117.7	10000.0	1340.9
Վայք	29	100.69	33.7	208.0	78.2	30	21.72	54.3	1430.7	522.8
Տավուշի մարզ										
Բերդ	15	3.67	147.1	5250.0	661.4	37	11.04	45.3	3783.8	385.4
Իջևան	24	41.89	45.8	9200.0	1177.6	27	18.34	240.0	9454.5	851.4
Նոյեմբերյան	4	8.50	525.0	735.0	695.0	60	28.46	45.3	7368.4	581.9

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. առաջին կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	9755.0	172.2	2517.8	1030.5	295	248274.0	113.2	22200.0	2503.2
Ապարան	15	14652.0	115.0	127.2	122.7	8	11140.0	113.2	632.1	209.5
Թալին						7	13910.0	45.3	1454.8	105.2
Ծաղկահովիտ	4	4800.0	70.8	70.8	70.8	6	12953.0	45.3	361.2	71.0
Արարատի մարզ										
Արտաշատ	135	143875.9	145.0	460.6	312.0	91	92299.0	135.8	7140.3	921.0
Մասիս	53	80378.0	266.7	1817.2	1201.0	203	159222.0	135.8	25000.0	1204.6
Վեդի	33	25667.0	165.6	1088.9	357.4	101	103549.0	113.2	5000.0	671.3
Արմավիրի մարզ										
Արմավիր	15	15438.0	277.3	1004.9	644.8	138	122274.0	131.6	9090.9	1196.0
Բաղրամյան						2	2430.0	81.5	833.3	142.1
Վաղարշապատ	12	9269.0	277.2	4697.4	2021.1	320	277648.0	135.8	26528.4	1534.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	6	6340.0	110.2	115.0	112.6	23	28460.0	135.8	1084.3	376.2
Ճամբարակ						4	9718.0	45.3	2286.2	102.8
Մարտունի	108	73144.0	37.5	118.7	106.7	48	57006.0	90.6	5000.0	266.5

Սևան	38	81042.0	188.1	1140.6	368.5	15	24735.0	90.6	3110.4	167.9
Վարդենիս	19	24447.0	378.4	378.4	378.4	9	13643.0	45.3	987.2	121.6
Լոռու մարզ										
Ալավերդի						10	11011.0	67.9	1388.9	139.6
Գուգարք	45	33334.0	32.4	7219.0	2628.2	25	32600.0	67.9	14083.3	582.5
Սյիսուակ						15	15540.0	63.4	1348.3	137.4
Ստեփանավան	10	9671.0	57.5	277.2	230.4	6	11420.0	45.3	1666.7	112.7
Տաշիր						3	3360.0	45.3	400.0	69.4
Կոտայքի մարզ										
Աբովյան	87	74179.0	270.0	3666.7	1539.1	321	291437.0	135.8	35353.5	1976.4
Եղվարդ	60	45277.0	845.2	4080.0	2009.1	345	319982.8	135.8	27000.0	2093.7
Հրազդան	37	35324.0	119.4	2937.0	491.7	52	47388.0	117.7	34848.5	1333.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	103	59757.7	199.0	116666.7	2865.4	30	23192.4	113.2	18750.0	331.3
Ամասիա						1	4820.0	45.3	274.7	69.3
Անի	2	1828.0	225.0	225.0	225.0	1	1000.0	67.9	180.6	98.9
Աշոցք						1	1490.0	40.8	144.0	58.1
Արթիկ	35	18915.0	52.5	1364.3	270.9	25	23449.0	67.9	5000.0	179.4
Սյունիքի մարզ										
Գորիս	4	5000.0	152.0	178.6	169.8	11	8214.0	67.9	1700.0	248.5
Կապան	12	11435.0	34.0	909.5	254.8	3	1500.0	67.9	2638.9	208.0
Մեղրի	7	3531.0	250.0	296.2	274.8	7	5163.0	67.9	632.9	128.6
Սիսիան						7	7747.0	67.9	875.0	145.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	43	38350.0	127.7	773.3	603.0	23	27051.0	67.9	7659.6	313.0
Վայք						2	1524.0	77.0	1448.3	121.6
Տավուշի մարզ										
Բերդ						3	2008.0	45.3	810.0	87.6
Իջևան	72	54112.0	50.8	2518.4	1291.3	58	51984.0	67.9	14423.1	444.1
Նոյեմբերյան						9	8970.0	45.3	1948.1	141.6

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 17 գործարքներ 16.21 հա մակերեսով, ընդ որում 1-ը՝ Երևանում /0.08 հա/, 2-ը՝ Լոռու /0.27 հա/, 11-ը՝ Շիրակի /15.62 հա/ և 1-ական՝ Գեղարքունիքի /0.06 հա/, Արարատի /0.11 հա/, Վայոց Ձորի /0.07 հա/ մարզերում:

2008թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5878 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 38.7% իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2008թ. առաջին կիսամյակում 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 20.6%-ով:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 320 բնակարանների, 223 անհատական բնակելի տների, 2296 հասարակական և 276 արտադրական նշանակության օբյեկտների, 2666 միավոր /23146.35 հա/ հողերի, 6 այգետնակների և 91 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 218 վարձակալության գործարքների, այդ թվում 55 միավոր /2.52 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 67.7%-ով:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալված 23146.35 հա հողերից 35.36 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 23110.99 հա հողերի 129.23 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 11.49 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 10774.00 հա, որից 2743.77 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 7255.42 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	7	560.94	184	658.73
Արարատ	24	4656.98	81	601.46
Արմավիր	0	0.00	91	262.26
Գեղարքունիք	12	412.10	190	795.06
Լոռի	6	161.00	108	422.61
Կոտայք	8	724.30	61	529.34
Շիրակ	4	70.60	219	473.60
Սյունիք	4	669.30	254	2074.47
Վայոց Ձոր	2	0.20	29	64.12
Տավուշ	0	0.00	18	21.59
Ընդամենը	67	7255.42	1235	5903.24

2008թ. առաջին կիսամյակում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2008թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13114 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 17.1%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 25.4%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.8%/, առանձնատների /27.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.4%/ և հողերի /12.9%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5103 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 22.6%-ով:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 1456 գործարքներ, որից 924ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 66.2%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 24.9%-ն՝ անհատական բնակելի տների, 4.2%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.2%-ն՝ ամառանոցների, 0.8%-ն՝ ավտոտնակների և 2.3%-ը՝ հողերի նկատմամբ:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 3809.22 հա մակերեսով հողեր, որից 46.37 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 97.7% կամ

3720.06 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.12 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2393.98 հա, որից 2390.55 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. առաջին կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 32 և 20 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. առաջին կիսամյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 3.7%-ով: 2008թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 36.5%:

2008թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի նվազման միտում:

2008թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 12639 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 15.2%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.7%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն